<u>ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ</u>

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 44

***ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ***

*Թերթերի թիվը՝*

*Ք. ԱՇՏԱՐԱԿ*

*2021Թ.*

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 44

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ*
*ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Մկրտչյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Կ. Շահազիզյանը, Հ. Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

5. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

   */Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

6. Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

   */Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:*

Հարցը զեկուցեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Շանթ Վահանյանը և առաջարկեց ընդունել ի գիտություն Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը: Զեկուցողը թվային արտահայտությամբ մանրամասն ներկայացրեց բյուջեի մուտքերն ու ելքերն, ինչպես նաև համեմատության մեջ ներկայացրեց նախորդ տարվա և ընթացիկ տարվա ցուցանիշները:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 3</u> - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 4</u>* - *Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 5</u>* - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով սեփականատեր հանդիսացող քաղաքացիների դիմումները, հավանություն տալ ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 6</u>* - *Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը՝ հաստատել Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և 02-001-0437-0105 ծածկագրով 0,1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային

նշանակության հողամասի /պտղատու այգի/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս՝ ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 7</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Երևանյան 1/10 հասցեում գտնվող առևտրի և սպասարկման օբյեկտին կից, 084-029 ծածկագրից 17քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը առևտրի և սպասարկման օբյեկտի ընդլայնման համար կառուցապատման իրավունքով դիմում ներկայացրած քաղաքացուն տրամադրելուն:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 8</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Կ. Շահազիզյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 9</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Միաժամանակ առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի հուլիսի 27-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱՋԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

***Արձ.- 44***

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 35 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 27.07.2021թ. նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշտարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

5. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

6. Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

***Արձ.- 44***

*Զեկուցող՝ Ծ. ՎԱՀԱՆՅԱՆ*

***N 36 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

| | ***Վարչական բյուջե*** | ***Ֆոնդային բյուջե*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 330891.7 | 37504.3 | 368396.0 |
| Ծախսային մաս | 284226.1 | 204982.3 | 489208.4 |

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ — ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ — ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ — ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ — ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Ծ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**(01/01/2021թ. - 30/06/2021թ. ժամանակահատվածի համար)**

1. Համայնքի անվանումը — **ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ**
2. Փոստային հասցե — **0201**
3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման` — **ԱՐԱԳԱԾՈՏՆ, 206009**
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը — 
5. Համայնքի` Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը — **(համայնքի բյուջե` 2)**
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը` 
7. Չափի միավորը` *հազար դրամ*

«27» 07 2021 թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ ՍԱՐԳՍԻ

(Ա. Ա. Հ.)

Կ.Տ.

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 44*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

**N 37 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

***Հավելված 1***

*Հաստատված է համայնքի ավագանու*
*27.07.2021թ. N 37-Ա որոշմամբ*

| ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՍՑԵ | ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԱՍՑԵ | ՍՈՑ. ՔԱՐՏԻ ՀԱՄԱՐ | ԳՈՒՅՔԱ ՀԱՐԿ | ՀՈՂԻ ՀԱՐԿ |
|---|---|---|---|---|---|
| Արմեն Սարգսյան | Ք. Աշտարակ Թորամանյան 22 | Ք. Աշտարակ Թորամանյան 22 | 1108840124 | 86500 | |
| Միքայել Գրիգորյան | Ք. Աշտարակ Վարդանանց 11ա | 845-028 | 1714560031 | 156800 | |
| Սիրակ Մինասյան | Ք. Աշտարակ Մուղնի 7րդ թաղամաս | Ք. Աշտարակ Մուղնի 7րդ թաղամաս | 1710680059 | 49793 | |
| Սիմոն Նալբանդյան | Ք. Աշտարակ Գետափնյա 28/1 | Ք. Աշտարակ Գետափնյա 28/1 | | 69350 | |
| Անահիտ Մովսիսյան | Ք. Աշտարակ Սիսակյան14/3 | 596-095 | 5208620065 | | 60613 |
| Վիգեն Մխիթարյան | Ծաղկահովիտ Գեղաձոր 12/2 | Ք. Աշտարակ Թամազյան 34/1 | 1101921110 | 40329 | |
| Սուրեն Միրզախանյան | Ք. Աշտարակ Ա. Մանուկյան 3/2 | | | 30000 | |
| Մարատ Գյուլամիրյան | Ք. Աշտարակ Ղափանցյան 7/6 | Ք. Աշտարակ Ղափանցյան 7/6 | 1302400053 | 7600 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 44*

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

**N 38 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1], 76-80 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 46.2 կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրել և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆ ՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*27.07.2021թ. N 38-Ա որոշմամբ*

Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | 1քմ-ի տարեկան վարձի մեկնարկային գինը /դրամ/ | Սահմանափակումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողամաս | Արտակի փողոց N 1/8 | 02-001-0265-0081 | 40 | բնակավայրերի | | ընդհանուր օգտագործման | 50 | |
| 2 | հողամասեր | Ա. Մանուկյան փողոց N 4 | 02-001-0095-0013-ից | 60,3 և 42,1 | բնակավայրերի | | ընդհանուր օգտագործման | 50 | |
| 3 | պետական սեփականություն հանդիսացող հողամաս | Երևան-Գյումրի մայրուղի | 169-001-ից | 5500 | էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | | տրանսպորտի | 50 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔ - ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Արձ.- 44***

*\/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ\/*

***N 39 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Խաչատուր Չիրոյանի 25.05.2021թ. N 850, Գաբրիել Ղազախեցյանի 01.07.2021թ. N 1095, Տիգրան Փիլիպոսյանի 01.07.2021թ. N 1101, Էմմա Փուրթոյանի 19.07.2021թ. N 1215 և Գոհար Կարապետյանի 19.07.2021թ. N 1207՝ գյուղ. նշանակության հողամասերում գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 8-րդ կետի 3) ենթակետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0806-0069 ծածկագրով, Խաչատուր Արմենի Չիրոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /գյուղ. մթերք վերամշակող տնտեսության և անասնագոմի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0537-0001 ծածկագրով, Գաբրիել Խաչիկի Ղազախեցյանին սեփականության իրավունքով պատկանող 0,49հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնագոմի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0443-0171 ծածկագրով, Տիգրան Գագիկի Փիլիպոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,06հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար /փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0748-0008 ծածկագրով, Գոհար Միշայի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5832հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասից /վարելահող/ 0,1137հա հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության և օժանդակ շինության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0694-0111 ծածկագրով, Էմմա Հովհաննեսի Փուրթոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2685հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ - 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 44*

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

**N 40 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի N 174 դրական եզրակացությունը՝ Աշտարակ քաղաքի 02-001-0437-0105 ծածկագրով 0,1հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հավելվածի64-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Հաստատել Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և 02-001-0437-0105 ծածկագրով 0,1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (պտղատու այգի) նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս՝ ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

ԿՈՂՄ - 8 ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 44***

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***N 41 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Գագիկ Սեթոյանի 19.07.2021թ. N 1209 դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Թույլատրել Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց, N 1/10 հասցեում գտնվող առևտրի և սպասարկման օբյեկտին կից, 084-029 ծածկագրից 17քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը առևտրի և սպասարկման օբյեկտի ընդլայնման համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Գագիկ Հենրիկի Սեթոյանին տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարով:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 44*

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***N 42 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 07.09.2006թ. N 1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 651-023 ծածկագրից 0,1868հա, 651-025 ծածկագրով 0,0391հա, 651-027 ծածկագրով 0,131հա, 811-031 ծածկագրով 0,1684հա, 811-033 ծածկագրով 0,252հա, 811-032 ծածկագրով 0,5401հա, 604-019 ծածկագրով 0,49775հա գյուղատնտեսական նշանակության, 222-009 ծածկագրից 189քմ, 167-025 ծածկագրից 4,74քմ և 105-014 ծածկագրով 515քմ բնակավայրերի նշանակության հողամասերը փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող 651-023 ծածկագրից 0,1868հա, 651-025 ծածկագրով 0,0391հա, 651-027 ծածկագրով 0,131հա, 811-031 ծածկագրով 0,1684հա, 811-033 ծածկագրով 0,252հա, 811-032 ծածկագրով 0,5401հա, 604-019 ծածկագրով 0,49775հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 222-009 ծածկագրից 189քմ, 167-025 ծածկագրից 4,74քմ և 105-014 ծածկագրով 515քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Ղ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*27-ը հուլիսի 2021թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***

**Արձ.- 44**

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

**N 43 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ — ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ — ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ — ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ — ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն